ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՄԵՐՁԵՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿԱՆՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՈՐ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅԱՆ՝ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Կ. Ս. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

Սովետական ժողովուրդների կուլտուրաների մերձեցումը և փոխադարձ հարստացումը սոցիալիստական կուլտուրայի կազմավորման և զարգացման օրինաչափություններից է։ Ժամանակակից էտապում՝ զարգացած սոցիալիստական հասարակության պայմաններում, այդ օրինաչափությունը ձեռք է բերել նոր հատկություններ, դարձել է կուլտուրայի ինտերնացիոնալացման պրոցեսի հետագա խորացման և մարդկանց պատմական նոր ընդհանրության՝ սովետական ժողովրդի կազմավորման կարևոր գործոններից մեկը։

Հասկանալի է, որ ժողովուրդների միջև կուլտուրական շփումներն ու կապերը նոր երևույթ չեն։ Միջազգային կուլտուրական կապերը գոյություն են ունեցել նաև հեռավոր անցյալում։ «...Մարդկության տարբեր մասերը, իրենց բոլոր երկպառակություններով հանդերձ,— գրում է ակադեմիկոս Ն. Ի. Կոնրադը,— կուլտուրայի ասպարեզում մշտապես շփման մեջ են եղել միմյանց հետ և առանց այդ շփման ապրել չէին կարող»[1]։ Ոչ մի ազգային կուլտուրա չի կարող մեկուսացված զարգանալ։ Կուլտուրական շփումներն ու փոխադարձ կապերը բնական են, դրանք անհրաժեշտ են և հանդիսանում են համաշխարհային կուլտուրայի զարգացման կարևորագույն պայմաններից մեկը։

Կապիտալիզմի ժամանակ ազգային կուլտուրաների մերձեցման պրոցեսը ձեռք է բերում ավելի ուժգին բնույթ։ «Հին տեղական և ազգային կղզիացածության և սեփական արտադրության արդյունքների հաշվին գոյությունը պահպանելուն,— գրել են Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը «Կոմունիստական կուսակցության մանիֆեստում»,— փոխարինելու է գալիս ազգերի փոխադարձ համակողմանի կապն ու համակողմանի կախումը ...Առանձին ազգերի հոգևոր գործունեության արգասիքը դառնում է ընդհանուր սեփականություն։ Ազգային միակողմանիությունն ու սահմանափակությունն ավելի ու ավելի անհնար են դառնում...»[2]։

Կուլտուրական փոխազդեցության ընդլայնվող պրոցեսին այս կամ այն չափով մասնակցում են բոլոր ժողովուրդները՝ և՛ մեծ, և՛ փոքր։ Արդեն կապիտալիզմի ժամանակ կուլտուրական կապերը դառնում են համաշխարհային կուլտուրայի զարգացման կարևոր գործոն։ «Ազգային կուլտուրաների փոխադարձ կապի և փոխադարձ հարստացման շրջանների ընդլայնումը, նախկինում տեղային այդ երևույթի վերածվելը համաշխարհային երևույթի՝ համաշխարհային կուլտուրայի առաջընթացի հզոր գործոն հանդիսացավ»[3]։

---

[1] Н. И. Конрад, Запад и Восток, М., 1966, стр. 462.

[2] Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, *Կոմունիստական կուսակցության մանիֆեստը, Երևան, 1973, էջ 58—59։*

[3] «Коммунизм и культура. Закономерности формирования и развития новой культуры», М., 1966, стр. 337.

Սակայն կապիտալիզմը չի կարող ապահովել տարբեր ժողովուրդների կուլտուրաների ներդաշնակ ու համակողմանի մերձեցում և փոխադարձ հարստացում։ Կուլտուրական կյանքի կապիտալիստական ինտերնացիոնալացումը կատարվում է միակողմանի, ի հաճույս տիրապետող երկրների կուլտուրայի։ Տիրապետող երկրների բուրժուազիան իր կուլտուրան փաթաթում է ճնշված երկրների ժողովուրդների վզին։ Կապիտալիզմի պայմաններում ժողովուրդներին «զարգացածների» և «հետամնացների» բաժանելը որոշվում է ոչ միայն տնտեսական, այլև կուլտուրական զարգացման մակարդակով, ընդ որում՝ առաջատար կապիտալիստական տերությունների բուրժուազիան ձգտում է անսասան պահել նման վիճակը։

Ասվածը վերաբերում է նաև մեկ պետության մեջ ապրող տարբեր ազգերի միջև կուլտուրական փոխհարաբերություններին։ Նկատի ունենալով ցարական Ռուսաստանի ժողովուրդների վիճակը և ինքնակալության ռուսականացման քաղաքականությունը, Ստ. Շահումյանը գրել է. «Մի պետության մեջ ապրող ազգերի միջև մերձեցումը ցանկալի է, անհրաժեշտ է և անխուսափելի է, բայց այդ պետք է լինի խաղաղ զարգացման և ասիմիլյացիայի միջոցով և ոչ թե արհեստական կերպով, բռնության և հալածանքների միջոցով»[4]։ Մինչև հեղափոխությունը Ռուսաստանի ժողովուրդների միջև կուլտուրական կապերը համեմատաբար սահմանափակ բնույթ էին կրում՝ նահապետականությունը, անկուլտուրականությունը, անգրագիտությունը դժվարացնում էին հոգևոր շփումը ժողովուրդների միջև։ Այն ժամանակ ազգամիջյան կուլտուրական կապերը զարգանում էին դասակարգային սուր պայքարի իրադրության մեջ, դրանք կատաղի դիմադրության էին հանդիպում ինքնակալության կողմից, որը ռուս և մյուս ժողովուրդների միջավայրում ամենադաժան կերպով հետապնդում էր այն գործիչներին, որոնք հանդես էին գալիս ընդդեմ սոցիալական և ազգային ճնշման, հանուն բոլոր ազգերի և ազգությունների բարեկամության, հանուն այն բանի, որպեսզի կուլտուրայի նվաճումներին հաղորդակից դառնան տարբեր ժողովուրդներ։ Միայն ինքնակալության տապալումը Ռուսաստանի ժողովուրդների ազգային կուլտուրաների գործիչներին հնարավորություն տվեց հաստատելու իսկական ստեղծագործական կապեր, լայն հեռանկարներ բացեց տարբեր ժողովուրդների կուլտուրաների մերձեցման և փոխադարձ հարստացման համար։

Սոցիալիզմի դարաշրջանում կուլտուրական կապերի բնույթը փոխվում է։ Սոցիալիզմը վերացնում է խոչընդոտները ազգային կուլտուրաների փոխադարձ հարստացման ճանապարհին, և այդ պրոցեսը դառնում է համապարփակ ու խոր, ընդգրկելով սովետական ժողովուրդների հոգևոր կյանքի բոլոր կողմերը։ Սովետական ժողովուրդների կյանքի սոցիալ-տնտեսական և գաղափարական հիմքերի ստեղծված ընդհանրությունը դառնում է նրանց զարգացող կուլտուրական մերձեցման և համագործակցության հիմք։ Սոցիալիզմը պայմաններ է ստեղծում ժողովուրդների միավորման, միասնական սովետական կուլտուրայի ձևավորման համար։ «Որպեսզի ժողովուրդները կարողանան իրոք միավորվել,— գրել են Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը,— նրանք պետք է ունենան ընդհանուր շահեր։ Որպեսզի նրանց շահերը կարողանան ընդհանուր լինել, պետք է վերացվեն սեփականատիրության գոյություն ունե-

---

4 Ս տ. Շ ա հ ո ւ մ յ ա ն, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1975, հ. 1, էջ 257։

ցող հարաբերությունները»[5]։ Սոցիալիզմը ոչնչացրեց սեփականատիրության հարաբերությունները և դրանով իսկ բացեց ազգային կուլտուրաների դասակարգային, գաղափարական հարազատության, իսկ այնուհետև նաև լիակատար միասնության ճանապարհը՝ ըստ նրանց սոցիալիստական բովանդակության։ Ազգային կուլտուրաների միասնությունը օրինաչափություն է, որը հատուկ է ճնշման բոլոր ձևերից ազատ նոր հասարակությանը։

Հայտնի է, որ ոչ մի սոցիալական օրինաչափություն չի իրականացվում ինքն իրեն։ Հասարակական զարգացման, այդ թվում նաև կուլտուրայի զարգացման պրոցեսները կատարվում են մարդկանց նպատակամղված գործունեության շնորհիվ։ Սովետական երկրում այդ գործունեությունը ղեկավարում է կոմունիստական կուսակցությունը։ Կուսակցությունը պլանաչափ կերպով կազմակերպում և ուղղություն է տալիս սովետական ժողովուրդների ազգային կուլտուրաների մերձեցման և փոխադարձ հարստացման պրոցեսին։ Սոցիալիստական շինարարության տարբեր էտապներում կուսակցությունը զանազան խնդիրներ է լուծել այդ բնագավառում։ Սովետական իշխանության առաջին տարիներին՝ սոցիալիստական շինարարության նախապատերազմյան հնգամյակների ժամանակաշրջանում, անհրաժեշտ էր ամենից առաջ վերջ տալ անցյալում ճնշված ժողովուրդների տնտեսական և կուլտուրական հետամնացությանը։ Ազգային հանրապետությունների տնտեսական զարգացման մակարդակների աստիճանական հավասարեցումը հանդիսացավ նրանց միջև կուլտուրական կապերի ընդլայնման հիմքը։

Նշված օրինաչափության հետևանքով սկզբնական շրջանում սովետական ազգային կուլտուրաների փոխադարձ կապերը որոշ չափով միակողմանի բնույթ էին կրում։ Խոսելով այդ ժամանակաշրջանի կուլտուրական կապերի մասին, մենք նկատի ունենք ռուսական կուլտուրայի առավել ազդեցությունը երկրի ժողովուրդների մյուս ազգային կուլտուրաների վրա։ Ռուս ժողովրդի կուլտուրան մեծ դեր է խաղացել մեր երկրի ժողովուրդների սոցիալիստական կուլտուրայի ձևավորման և զարգացման գործում։

Սոցիալիստական շինարարության հաջողություններին և անցյալում ճնշված ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական հետամնացության վերացմանը զուգընթաց փոխվում էր նաև կուլտուրական փոխազդեցության բնույթը՝ այդ պրոցեսը իրոք դառնում էր երկմիասնական։ Հասկանալի է, որ մեր երկրի ժողովուրդների կուլտուրաները դեռևս չեն հասել միևնույն մակարդակին։ Բայց մեկընդմիշտ անցյալի սեփականություն է դարձել այն աղավաղող կուլտուրական անհավասարությունը, որը մեզ ժառանգություն էր մնացել կապիտալիզմից։ Ժամանակակից էտապում, զարգացած կապիտալիզմի պայմաններում, տեղի է ունենում մեր բազմազգ հայրենիքի ժողովուրդների կուլտուրաների փոխադարձ հարստացման ուժգին պրոցես։ Այդ պրոցեսը բարդ է, բազմապլան և ունի մի շարք կողմեր ու ասպեկտներ։ Մեր հասարակարգի բուն էությունը, նրա արտադրական հարաբերությունները պայմանավորում են սովետական կուլտուրայի ինտերնացիոնալացումը, ուժեղացնում են սովետական ժողովուրդների կուլտուրաների փոխադարձ հարստացումը և մերձեցումը։ Այդ պրոցեսը հանգեցնում է ամբողջ սովետական հասարակության հոգևոր ընդհանրության ստեղծմանը, միասնական սովետական մշակույթի ձևավոր-

---

[5] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 4, стр. 371.

սանը։ Միասնական մշակույթը սովետական ժողովրդի՝ որպես մարդկանց պատմական նոր ընդհանրության, կարեորագույն հատկանիշներից մեկն է, որովհետև մարդկանց յուրաքանչյուր պատմական ընդհանրության հատուկ է ընդհանուր հոգևոր կերպարը։

Մարդկանց պատմական նոր ընդհանրության՝ սովետական ժողովրդի առաջացումը պայմանավորված է սոցիալիստական ժամանակաշրջանում սովետական ժողովուրդների կյանքի ինտերնացիոնալացման պրոցեսով։ «ՍՍՀՄ-ում սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման տարիներին,— ասված է, «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 50-ամյակի նախապատրաստության մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ,— առաջացավ մարդկանց պատմական նոր ընդհանրություն՝ սովետական ժողովուրդը։ Նա կազմավորվեց արտադրության միջոցների հանրային սեփականության բազայի վրա, տնտեսական, սոցիալ-քաղաքական ու կուլտուրական կյանքի միասնության, մտքաս-լենինյան գաղափարախոսության, բանվոր դասակարգի շահերի ու կոմունիստական իդեալների բազայի վրա»[6]։ Այսպիսով, կուլտուրական կյանքի միասնությունը սովետական ժողովրդի կազմավորման գործոններից մեկն է. այդ միասնությունը ձեռք է բերվում ընդհանուր գաղափարախոսության և ընդհանուր աշխարհայացքի բազայի վրա սովետական ժողովուրդների կուլտուրաների մերձեցման և փոխադարձ հարստացման միջոցով։

Իսկ ինչպիսի՞ գծեր են հատուկ սովետական մարդկանց հոգևոր կերպարին, ի՞նչն է ձևավորում նրանց հոգևոր ընդհանրությունը։ Դրանք են՝ «նվիրվածությունը կոմունիզմի գործին, սոցիալիստական հայրենասիրությունն ու ինտերնացիոնալիզմը, աշխատանքային ու հասարակական-քաղաքական բարձր ակտիվությունը, անհաշտությունը շահագործման ու ճնշման նկատմամբ, ազգային ու ռասայական նախապաշարմունքների նկատմամբ, դասակարգային համերաշխությունը բոլոր երկրների աշխատավորության հետ»[7]։ Այդ գծերը հատուկ են սովետական մարդկանց՝ անկախ նրանց ազգային պատկանելությունից։ Այդ գծերը հարազատացնում, մերձեցնում և համախմբում են նրանց։ Մենք իրավունք ունենք ասելու, որ մեր երկրում ձևավորվել է մարդկանց նոր՝ սոցիալիստական տիպ, որի հոգևոր կերպարը, ազգային առանձնահատկությունների պահպանմամբ հանդերձ, բնորոշվում է ինտերնացիոնալ, համասովետական գծերի առկայությամբ։

Սովետական մարդկանց հոգևոր կերպարի բնորոշ գծերն են սոցիալիստական հայրենասիրությունն ու ինտերնացիոնալիզմը։ Սերը իր հայրենիքի, հողի, իր ազգի նկատմամբ հնուց ի վեր հատուկ է մարդկանց։ Դրանք մարդկային ամենանվիրական զգացմունքներից են, որոնք ընդունակ են առաջ բերելու մարդու հոգևոր ուժերի վերելք, նրան մղելու մեծ հղացումների ու սրխրանքների։ Հայրենասիրության մեջ է արտահայտվում մարդկանց սերը իրենց հայրենիքի անցյալի, ներկայի և ապագայի նկատմամբ։ «Հայրենասիրությունը,— նշել է Վ. Ի. Լենինը,— առանձնացված հայրենիքների՝ դարերով ու հազարավոր տարիներով ամրացված ամենախորն զգացմունքներից մեկն

---

[6] «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 50-ամյակի նախապատրաստության մասին»։ ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը, Երևան, 1972, էջ 20—21։

[7] Նույն տեղում, էջ 21։

է»[8]։ Այսպիսով, հայրենասիրությունը պատմական կատեգորիա է և, հետևաբար, ենթակա է փոփոխությունների՝ կապված սոցիալ-պատմական պայմանների փոխակերպումների հետ։ Սովետական Վրաստանի 50-ամյակին նվիրված հանդիսավոր նիստի ժամանակ Թբիլիսիում արտասանած ճառում Լ. Ի. Բրեժնևը ասել է. «Թերևս չկա մարդ, որը չունենա անկապտելի սիրո զգացում, խորունկ կապվածություն պտպերի ու նախապապերի հողի, իր լեզվի, իր տրադիցիաների և սովորությունների նկատմամբ։ Բայց սոցիալիստական հասարակության մեջ այդ զգացումը՝ հայրենասիրության զգացումը, դուրս է գալիս ազգային պատկանելության սահմաններից, լցվում նոր բովանդակությամբ»[9]։

Ինտերնացիոնալիզմը նույնպես պատմական կատեգորիա է, բայց այն առաջացել է հայրենասիրությունից զգալիորեն ավելի ուշ, կապիտալիզմի դարաշրջանում և հենց սկզբից ունեցել է վառ արտահայտված դասակարգային բնույթ, քանի որ նրա հետևողական կրողն է պրոլետարիատը։ Հայրենասիրությունը և ինտերնացիոնալիզմը չեն հակասում միմյանց. ընդհակառակը, յուրաքանչյուր իսկական հայրենասեր չի կարող չլինել ինտերնացիոնալիստ, իսկ ինտերնացիոնալիստ լինելը չի նշանակում հրաժարվել հայրենասիրությունից։ Դեռևս 1905 թ. Գ. Վ. Պլեխանովը այդ կապակցությամբ գրել է, որ «սոցիալիստական ինտերնացիոնալիզմը միանգամայն համատեղելի է հայրենի երկրի բարօրությանը նվիրված ամենաջանտսիրական ու ամենաանխոնջ աշխատանքի հետ։ Բայց նա բոլորովին անհամատեղելի է հայրենի երկրի պաշտպանության հետ այն դեպքում, երբ նրա շահերը հակասության մեջ են մրտնում հեղափոխական մարդկության, այսինքն՝ պրոլետարիատի արդի միջազգային շարժման, այսինքն՝ առաջադիմության շահերի հետ»[10]։

Վ. Ի. Լենինը հայրենասիրությունը կապում էր հեղափոխական և ազատագրական պայքարի շահերի հետ։ Տակավին սովետական իշխանության առաջին տարիներին նա նկատել է ժողովրդական մասսաների հայրենասիրության նոր բովանդակությունը և այն անվանել է հեղափոխական։

Սովետական մարդկանց հայրենասիրությունն ու ինտերնացիոնալիզմը սերտորեն միահյուսվում են, շաղկապվում, հանդես են գալիս միասնության մեջ։ «Էթնիկական ընդհանրության նոր ձևը՝ սովետական ժողովուրդը,— գրում է սովետական փիլիսոփա Ի. Ս. Կոնը,— կազմվում է ոչ թե ամբողջությունից ազգային յուրահատկությունը «հանելու», այլ դրանց ստեղծագործական ինտեգրացիայի միջոցով։ Եվ այդ պատճառով էլ ինտերնացիոնալիզմի զգացմունքը չի վերացնում ազգային պատկանելության և ազգային հպարտության զգացմունքները»[11]։ Իսկական սովետական հայրենասերը հետևողական ինտերնացիոնալիստ է. նրա համար անընդունելի է ոչ միայն նացիոնալիզմն իր բոլոր դրսևորումներով հանդերձ, այլև դեպի ազգային ինքնամփոփվածություն և գավառականություն տանող ազգային սնապարծությունն ու ազգային սահմանափակությունը։ Իր ազգային կուլտուրայի իսկական ջատագովը չի կարող հանդես գալ հանուն մեկուսացվածության, հանուն

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 227։

9 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 3, Երևան, 1972, էջ 457։

10 Գ. Վ. Պլեխանով. Փիլիսոփայական ընտիր երկեր, հ. 3, էջ 101։

11 «Иностранная литература». 1968, № 9. стр. 229.

կուլտուրայի ազգային յուրահատկության կարծեցյալ «մաքրության»։ Ցանկացած ազգային մշակույթ,— եթե նա չի ցանկանում կանգ առնել իր զարգացման ճանապարհին, իրեն դատապարտել անիմաստ գոյության և անկման,— պետք է կողմնորոշվի համաշխարհային չափանիշներով, ունենա ինտերնացիոնալ ուղղվածություն։

Հանդես գալով սովետական գրողների համամիութենական առաջին համագումարում, Եղիշե Չարենցն ասել է. «Ես ևս, որպես հայ գրող, պատկանում եմ «փոքր» ազգության և գիտեմ, որ եթե իմ ստեղծագործական գործունեությունը հոգեբանորեն սահմանափակեմ ազգային ներփակված շրջանակներում, որքան ողորմելի կլինի նրա դիապազոնը և ազդեցության ոլորտը։ Ես երջանիկ եմ և զգում եմ ինձ մարդկության ամենաառաջավոր հոսանքի մասնիկը շնորհիվ այն բանի, որ Հոկտեմբերյան հեղափոխությունը վերացրել է իմ հոգևոր տեսադաշտից ազգային ինքնասահմանափակումների այդ ողորմելի ցնորքը»[12]։ Այս խոսքերն ասվել են քառասուն տարի առաջ, բայց իրենց նշանակությունը չեն կորցրել նաև մեր օրերում։

Անհանդուրժողականությունը ազգային սահմանափակության նկատմամբ հատուկ է բոլոր մեծ արվեստագետներին։ «Ոչ մի գրականություն այսօր չի կարող լիարժեք զարգանալ շփումներից դուրս։ Եվ ցանկացած գրականության մասին դատողությունը թերի կլինի, եթե այն չդիտվի որպես ամբողջ համաշխարհային գրականության մի մասը,— գրում է Զինգիզ Այտմատովը։—...Առաջադիմության ձգտող յուրաքանչյուր գրականություն պետք է իրեն դատի առավելագույն չափանիշներով։ Միայն այդպես կարելի է հույս ունենալ հաղթահարելու ինքնամփոփությունն ու գավառականությունը, միայն համաշխարհային գրականության օրիենտիրները պետք է լինեն պրոֆեսիոնալ վարպետության չափանիշը»[13]։ Մնում է ավելացնել, որ այդ պահանջը վերաբերում է ոչ միայն գրականությանը, այլև կուլտուրայի բոլոր ասպարեզներին, ամբողջությամբ վերցրած յուրաքանչյուր ազգային կուլտուրային։

Սոցիալիստական հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի զարգացումը նպաստում է սովետական մարդկանց համաժողովրդական ինքնագիտակցության ձևավորմանը, որը գոյություն ունի ազգային և դասակարգային ինքնագիտակցության հետ միասին։ Համաժողովրդական ինքնագիտակցության կարևոր արտահայտությունն է սովետական ժողովրդին պատկանելու զգացմունքը, համասովետական հպարտության զգացմունքը։

Ազգային հպարտությունը յուրաքանչյուր ազգի հոգևոր կերպարի անքակտելի հատկանիշն է։ Իր «Վելիկոռուսների ազգային հպարտության մասին» նշանավոր հոդվածում Վ. Ի. Լենինը ցույց է տվել, թե իսկական հայրենասերները ինչպես պետք է վերաբերվեն ազգային հպարտությանը։ Եվ այդ հարցում վճռորոշը կապիտալիզմի ժամանակ կուլտուրայի սոցիալական երկփեղկվածության վերաբերյալ լենինյան ուսմունքն է։ «Խո՞րթ է արդյոք մեզ համար, վելիկոռուսական գիտակից պրոլետարներիս համար, ազգային հպարտության զգացումը։ Իհարկե, ոչ։ Մենք սիրում ենք մեր լեզուն ու մեր հայրենիքը, մենք ամենից ավելի աշխատում ենք այն բանի վրա, որ նրա աշխա-

12 Ս. Չարենց, Գրականության մասին, Երևան, 1957, էջ 165—166։
13 «Литературная газета», 22. VIII. 1972.

տավոր մասսաներին (այսինքն՝ նրա բնակչության 9/10) բարձրացնենք մինչև դեմոկրատների ու սոցիալիստների գիտակից կյանքը»[14]։

Սովետական իշխանության տարիներին ստեղծվել է հասկացողություն սովետական մարդու, սովետական հպարտության մասին։ «Այժմ, Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորումից կես դար անց, մենք լիակատար հիմունքով կարող ենք ասել առավել լայն հասարակության մասին, մեր ամբողջ ժողովրդի հայրենասիրական մեծ զգացման՝ սովետական մարդու համազգային հպարտության մասին»[15]։ Սովետական մարդու համազգային հպարտությունը ոչ միայն սոցիալ-քաղաքական կատեգորիա է, այլև մարդկային գիտակցության նոր վիճակ, գեղագիտական նոր զգացմունք։ Համազգային հպարտությունն առաջանում է այն հասարակության մեջ, որտեղ չկա ազգային երկպառակություն, որտեղ «ազգայինը ավելի ու ավելի է արգասավորվում մյուս եղբայրական ժողովուրդների նվաճումներով»[16]։ Սովետական բազմազգ մշակույթը ծառայում է այդ զգացմունքի ամրապնդմանն ու զարգացմանը։ Սովետական մշակույթը, առանձնապես գրականությունը և արվեստը, մեծ ազդեցություն են գործում սովետական մարդկանց ընդհանուր ինտերնացիոնալիստական հատկանիշների ձևավորման, համաժողովրդական ինքնագիտակցության մշակման վրա։ Բայց նման ներգործության ի վիճակի լինելու համար գրականության և արվեստի ստեղծագործությունները, չկորցնելով իրենց ազգային յուրօրինակությունը, պետք է ունենան ինտերնացիոնալ հնչեղություն, մեծ իմաստավորություն, հասկանալի և մոտ լինեն ամբողջ սովետական ժողովրդին։ Հենց շնորհիվ այդ հատկանիշների սովետական մշակույթի գանձարան են իրավամբ մտել Միխայիլ Շոլոխովի և Վիլիս Լացիսի, Միխայիլ Ստելմախի և Կոնստանտին Պաուստովսկու, Դերենիկ Դեմիրճյանի և Կոնստանտինե Գամսախուրդիայի հոյակապ արձակը, Ալեքսանդր Տվարդովսկու և Էդուարդաս Մեժելայտիսի, Ռասուլ Համզատովի և Պարույր Սևակի պոեզիան, Պավել Կորինի և Մարտիրոս Սարյանի, Թաիր Սալախովի և Տատյանա Յաբլոնսկայայի գեղանկարչությունը, Դիմիտրի Շոստակովիչի և Արամ Խաչատրյանի, Սերգեյ Պրոկոֆևի և Կարա Կարաևի երաժշտությունը, սովետական թատրոնի և կինոյի վարպետներ Վասիլի Կաչալովի և Ալլա Տարասովայի, Վերիկո Անջափարիձեի և Ամվրոսի Բուչմայի, Արուս Ոսկանյանի և Սերգո Զաքարիաձեի, Սոլոմոն Միխոելսի և Վիա Արտմանեի ստեղծած բեմական կերպարները և շատ ուրիշ ստեղծագործություններ։

Սակայն չպետք է ենթադրել, թե միայն ժամանակակից սովետական մշակույթն է ի վիճակի ներգործելու սովետական մարդկանց ընդհանուր գծերի և համաժողովրդական ինքնագիտակցության ձևավորման վրա։ Այդ գործում մեծ դեր է խաղում մեր երկրի ժողովուրդների անցյալի առաջավոր, դեմոկրատական մշակույթը։ Ազատասիրություն, հումանիզմ, ժողովրդայնություն՝ այս և իսկական համամարդկային մշակույթի ուրիշ առաջադիմական հատկություններով է ներծծված Ա. Ս. Պուշկինի և Տ. Գ. Շևչենկոյի, Խ. Աբովյանի և

---

14 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 118։

15 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 4, Երևան, 1974, էջ 135։

16 Նույն տեղում, էջ 80։

Մ. Ֆ. Ախունդովի, Աբայ Կունանբաևի և Ն. Բարաթաշվիլու, Ցան Ռայնիսի և Իվան Ֆրանկոյի ստեղծագործությունը։ Մեծարժեք ստեղծագործության մեջ նրանք արտահայտել են իրենց ժողովուրդների նվիրական ակնկալությունները և այդ ձգտումները մոտ ու հասկանալի են սովետական մարդկանց։ Ազգային կուլտուրաների անանցողիկ արժեքը հենց նրանում է, որ այդ կուլտուրաների լավագույն ստեղծագործությունները ապրում են հավետ, ծառայում են ժողովրդի բաղում սերունդների։

Սովետական մարդկանց ընդհանուր ինտերնացիոնալ գծերի ձևավորման գործում մեծ դեր են խաղում ազգային ավանդույթները, ինչպես նաև նոր ստեղծող, ամբողջ ժողովրդի համար ընդհանուր, սովետական ավանդույթներն ու սովորությունները։

Ավանդույթներն ու սովորությունները ազգի հոգևոր կերպարի բաղկացուցիչ տարրերն են։ Իսկական ժողովրդական սովորությունները միշտ էլ ազգային են, բայց նրանք ունեն նաև ընդհանուր սոցիալական, դեմոկրատական հիմք։ Ազգային ավանդույթների հենց այդ ընդհանուր սոցիալական, դեմոկրատական բովանդակությունն է նման և համանշանակ դարձնում տարբեր ժողովուրդների ավանդույթները, ժողովուրդներ, որոնք հաճախ միմյանց հետ կապված չեն տարածքի ընդհանրությամբ։ Ավանդույթներն ու սովորությունները ժողովրդի կյանքի սոցիալ-պատմական պայմանների արդյունք են։ Այդ պատճառով ավանդույթներն ու սովորությունները ենթակա են փոփոխությունների և փոխակերպության։

Կյանքի փոփոխվող պայմանների հետ հակասության մեջ մտնող ավանդույթներն ապրում են իրենց դարը, դառնում են հետադիմական և, ունենալով իներցիայի որոշակի ուժ, սկսում են խոչընդոտել ազգի առաջադիմությանը։ Բայց հասարակության առաջընթաց շարժումը վերջին հաշվով կատարում է ավանդույթների ու սովորությունների ընտրություն. որոշ հին ավանդույթներ ձևափոխվում են, շարունակում են ապրել նոր պայմաններում. միաժամանակ տեղի է ունենում նոր ավանդույթների ձևավորում, որոնք ծնունդ են նոր հասարակության կյանքի։ Սոցիալիստական հասարակությունը չի կարող անտարբեր վերաբերվել ավանդույթների ունեցած դերին։ Իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով հասարակությունը ակտիվորեն ներգործում է ավանդույթների վրա, պաշտպանում է դրանցից առաջադիմականները, պայքար մղում հետամնաց ու պահպանողական ավանդույթների դեմ։ Ն. Կ. Կրուպսկայան մատնանշել է, որ կարևոր է ազգային կուլտուրաների բացասական կողմերի վերացումը, բայց միևնույն ժամանակ վիթխարի նշանակություն ունի ազգային կուլտուրաների դրական կողմերի զարգացումը։

Յուրաքանչյուր ժողովուրդ ունի առաջադիմական ավանդույթներ և սովորություններ, որոնք արտահայտում են սեր հայրենիքի, մերձավորների նկատմամբ, ազատասիրություն, կոլեկտիվիզմ, դժբախտության պահին օգնության հասնելու պատրաստակամություն, հավատարմություն, կյանքից հեռացածների հիշատակի հարգանք և այլն։ Այդ ավանդույթները արժանի են ամեն տեսակ աջակցության, հետագա խորացման ու զարգացման։ «Պաշտպանելով յուրաքանչյուր ժողովրդի առաջադիմական տրադիցիաները, դրանք դարձնելով սովետական բոլոր մարդկանց սեփականությունը, կուսակցու-

թյունը ըստ ամենայնի կդարգացնի կոմունիզմ կառուցողների նոր, բոլոր ազգերի համար միասնական հեղափոխական տրադիցիաներ»[17]։

Առաջադիմական ավանդույթները հատուկ են ոչ միայն անցյալին։ «Հաճախ այն մարդիկ, որոնք կրքոտությամբ պաշտպանում են ավանդույթները, չդիտես ինչու դրանք որոնում են միայն անցյալում,— գրում է ադրբեջանցի բանաստեղծ Ռասուլ Ռզան։— ...Հարց է ծագում՝ մի՞թե ավանդույթներ ստեղծելը անցյալի մենաշնորհային իրավունքն է։ Ինչո՞ւ մեր իրականությունը, որը հարյուրաստիկ ավելի հետաքրքիր, ավելի հարուստ է անցյալից, չի կարող և չպետք է ստեղծի նոր ավանդույթներ»[18]։ Սոցիալիստական իրականությունը ինքն է ստեղծում նոր ավանդույթներ։ Մեր երկրում վաղուց արդեն ավանդական են դարձել համաժողովրդական հեղափոխական տոները, տարբեր մասնագիտությունների օրերը և այլն։ Վերջին տարիներին սկսել են ավանդույթ դառնալ նոր տոնական արարողություններ, որոնք կապված են սովետական մարդկանց կյանքում տեղի ունեցող այնպիսի իրադարձությունների հետ, ինչպես երեխաների ծնունդը, անձնագիր ստանալը, դպրոցն ավարտելը, զինված ուժերում ծառայության մեկնելը, բանակից վերադառնալը, հարսանիքները, կենսաթոշակի գնալը և այլն։ Ավանդական է դարձել ժողովրդի հոգատար, սիրալիր վերաբերմունքն իր հերոսական անցյալի, պատմական հուշարձանների, կուլտուրայի կոթողների նկատմամբ։ Մասնավորապես Հայաստանում վերջին տասնամյակների ընթացքում զգալի աշխատանք է կատարվել ճարտարապետական հուշարձանների վերականգնման ուղղությամբ, ստեղծված է հուշարձանների պահպանության կոմիտե, բացատրական և պրոպագանդիստական լայն աշխատանք է տարվում այդ ասպարեզում։ Հայ ժողովրդի՝ իր պատմական անցյալի նկատմամբ ունեցած հարգանքն արտահայտություն է գտել ճարտարապետական այնպիսի հոյակապ կոթողների մեջ, ինչպես Սասունցի Դավթի, Մեսրոպ Մաշտոցի, Սայաթ-Նովայի հուշարձանները, 1915 թ. Եղեռնի զոհերի հուշահամալիրը Երևանում, Սարդարապատի ճակատամարտի հերոսների հուշահամալիրը Հոկտեմբերյանում և այլն։ Իսկ մի՞թե համասովետական ավանդույթ չի դարձել մեր հայրենիքի քաղաքներում Անհայտ զինվորի գերեզմանների կառուցումը և հանդիսավոր արարողությունների կազմակերպումն այդ գերեզմանների մոտ։ Հայաստանի բոլոր քաղաքներում ու գյուղերում հուշարձաններ են կանգնեցվել Հայրենական մեծ պատերազմում զոհված հայրենակիցների հիշատակին։ Կառուցված լինելով ժողովրդի միջոցներով, այդ հուշարձանները վկայում են, որ ժողովուրդը հիշում և հարգանքով խոնարհվում է գալիք սերունդների երջանկության համար իրենց կյանքը տված զավակների առջև։ Հայ ժողովրդի կյանքում երևան են եկել նաև այլ նոր ավանդույթներ։ Ավանդական են դառնում երգի տոները՝ մերձբալթյան ժողովուրդների այդ հնադույն ավանդույթը, նշվում է Գարնան տոնը, Ոսկե աշունը և այլն։

Դրա հետ մեկտեղ վերջին տասնամյակների ընթացքում Հայաստանում որոշակի աշխատանք է տարվել մի շարք կենցաղային սովորությունների

---

17 «ՍՄԿԿ XXII համագումարի նյութերը», Երևան, 1962, էջ 538։

18 Цит. по кн. А. Наджафов, Сближение культур социалистических наций. Баку, 1970, стр. 274—275.

կարգավորման, դրանց ուղեկցող ավելորդ շռայլությունների վերացման ուղղությամբ և այլն։ Սակայն կենցաղային շատ սովորություններ աչքի են ընկնում կենսունակությամբ, դժվարությամբ են ենթարկվում փոխակերպումների, և այդ ուղղությամբ դեռևս մեծ անելիքներ կան։

Այսպիսով, առաջադիմական ազգային ավանդույթների ու սովորությունների զարգացումը, ինչպես նաև նոր, համաժողովրդական ավանդույթների ստեղծումը նպաստում են սովետական մարդկանց հոգևոր ընդհանրության ամրապնդմանը։

ՍՍՀՄ ժողովուրդների կուլտուրական ընդհանրության կազմավորման համար բնորոշ է նաև ազգամիջյան հաղորդակցության լեզվի ինտենսիվ զարգացումը։ Այդ դերում հանդես է գալիս ռուսաց լեզուն։ Ռուսաց լեզվի վերածվելը ազգամիջյան հաղորդակցության լեզվի օրինաչափ երևույթ է, որը պայմանավորված է մեր երկրի ժողովուրդների սոցիալ-տնտեսական կյանքի ամբողջ կառուցվածքով։ Դեռևս մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը Վ. Ի. Լենինը մատնանշում էր, որ «տնտեսական շրջանառության պահանջները մշտապես կստիպեն մի պետության մեջ ապրող ազգություններին (որքան ժամանակ նրանք կցանկանան միասին ապրել) սովորել մեծամասնության լեզուն»[19]։ Սոցիալիստական հասարակության պայմաններում, որ աչքի է ընկնում հասարակական կյանքի բոլոր կողմերի ինտերնացիոնալացման բարձր աստիճանով, ազգերի բարեկամական հարաբերությունների զարգացմամբ և մերձեցմամբ, «մեծամասնության լեզուն» դարձել է ոչ միայն ազգամիջյան հաղորդակցության ճանաչված միջոց, այլև մեր երկրում ապրող ժողովուրդների երկրորդ լեզուն։ Այսպիսով, ՍՍՀՄ-ում տեղի է ունենում երկլեզվության աճի պրոցես[20]։ Այդ մասին առավել ակնառու կերպով վկայում են բնակչության համամիութենական վերջին մարդահամարի տվյալները, որոնց համաձայն 41,9 մլն մարդ ազատ տիրապետում է ռուսաց լեզվին։

Մեծ է ռուսաց լեզվին մեր երկրի ազգությունների աշխատավորների հաղորդակից դառնալու առաջադիմական նշանակությունը։ Ազգամիջյան հաղորդակցության լեզուն նրանց հնարավորություն է տալիս իրենց սեփականությունը դարձնելու բոլոր ժողովուրդների նվաճումները գիտության, տեխնիկայի և մշակույթի ասպարեզում։ Ռուսաց լեզվին տիրապետելը, երկլեզվության աճը համապատասխանում են ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների շահերին, նպաստում են նրանց առաջընթացին։ Պետք է հատկապես նշել, որ ռուսաց լեզվին հաղորդակից դառնալը տեղի է ունենում կամավոր սկզբունքներով, առանց որևէ հարկադրման։ 1914 թ. Վ. Ի. Լենինը գրել է. «Ով մենք, հասկանալի է, կողմնակից ենք նրան, որպեսզի Ռուսաստանի յուրաքանչյուր բնակիչ հնարավորություն ունենա սովորելու ռուսաց մեծ լեզուն։ Մենք չենք ցանկանում միայն մի բան՝ ստիպողականության տարրը»[21]։ «Մեծ ու հզոր ռուսաց լեզուն,— ավելացրել է Վ. Ի. Լենինը,— կարիք չի զգում, որպեսզի

---

19 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 5։

20 Մենք նկատի ունենք երկլեզվության ազգային-ռուսական տեսակը, այսինքն, երբ ոչ ռուս ազգությունների ներկայացուցիչները մայրենի լեզվի հետ միասին տիրապետում են նաև ռուսաց լեզվին։

21 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 73։

որևէ մեկը այն սովորի մահակի տակ»[22]։ Սոցիալիզմի պայմաններում բռնի ռուսականացման քաղաքականությանը փոխարինելու է եկել ոչ ռուս ազգությունների կամավոր կերպով ռուսաց լեզվին հաղորդակից դառնալը,— մի պրոցես, որը շատ բանով է նպաստում ազգերի և ազգային կուլտուրաների մերձեցմանը։

Կարելի՞ է արդյոք կարծել, որ երկլեզվության զարգացումը տանում է դեպի ազգային լեզուների, իսկ դրանց հետ մեկտեղ նաև ազգային կուլտուրաների մահացում։ Ամենևին ոչ։ ՍՍՀՄ-ում տեղի է ունենում երկլեզվության և ազգային լեզուների զարգացման միաժամանակյա պրոցես։ Ռուսաց լեզվի տարածումը որպես ազգամիջյան հաղորդակցության լեզվի չի խոչընդոտում մյուս ժողովուրդների լեզուների հետագա զարգացմանը։

Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ մարդկանց պատմական նոր ընդհանրության՝ սովետական ժողովրդի զարգացումը, ազգային կուլտուրաների մերձեցման և փոխադարձ հարստացման պրոցեսը, որոնք օրինաչափ կերպով առաջին պլան են մղում ինտերնացիոնալ ընդհանրության հարցերը, ոչ մի կերպ չպետք է մեկնաբանվեն որպես «ազգերի ձուլում», «ազգային կուլտուրաների մահացում» և այլն։ Լ. Ի. Բրեժնևը նշում է· «Խոսելով մարդկանց պատմական նոր ընդհանրության մասին, մենք ամենևին էլ նկատի չենք ունենում, թե մեզ մոտ արդեն անհետացել են ազգային տարբերությունները կամ, մանավանդ, տեղի է ունեցել ազգերի ձուլում։ Սովետական Միությունում ապրող բոլոր ազգերն ու ազգությունները պահպանում են իրենց յուրահատկությունները, ազգային բնավորության գծերը, լեզուն, իրենց լավագույն տրադիցիաները։ Նրանք բոլոր հնարավորություններն ունեն հասնելու իրենց ազգային կուլտուրայի էլ ավելի մեծ ծաղկման»[23]։

Ղեկավարելով ազգերի, ազգային կուլտուրաների մերձեցման և փոխադարձ հարստացման պրոցեսը, կոմունիստական կուսակցությունը հիշում է Վ. Ի. Լենինի այն ցուցումը, որ «ժողովուրդների ու երկրների միջև գոյություն ունեն ազգային ու պետական տարբերություններ— իսկ այդ տարբերությունները պրոլետարիատի դիկտատուրան նույնիսկ համաշխարհային մասշտաբով իրագործվելուց հետո էլ կպահպանվեն շատ ու շատ երկար ժամանակ»[24]։

Կուլտուրաների մերձեցումը որպես մարդկանց պատմական նոր ընդհանրության՝ սովետական ժողովրդի զարգացման գործոն, ձևավորում է ինտերնացիոնալ ընդհանրություն, միասնական սովետական կուլտուրա։ Այդ կուլտուրան ծնունդ է առել կյանքից, ընթանում է դեպի ապագան, ընկալում է համաշխարհային քաղաքակրթության նվաճումները և դրա հետ մեկտեղ հենվում է իր անցյալի, ՍՍՀՄ ժողովուրդների ազգային կուլտուրաների առաջադիմական և դեմոկրատական ավանդույթների վրա։

---

22 Նույն տեղում։

23 Լ. Ի. Բ ր ե ժ ն և, Լենինյան կուրսով, հ. 4, էջ 321։

24 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հ. 31, էջ 97։

СБЛИЖЕНИЕ КУЛЬТУР КАК ФАКТОР РАЗВИТИЯ НОВОЙ ИСТОРИЧЕСКОЙ ОБЩНОСТИ СОВЕТСКОГО НАРОДА

К. С. ХУДАВЕРДЯН

Резюме

Сближение и взаимное обогащение культур советских народов—одна из закономерностей становления и развития социалистической культуры. На современном этапе, в условиях развитого социализма, эта закономерность приобрела новые качества, стала одним из факторов процесса интернационализации культуры и образования новой исторической общности людей—советского народа.

Основные черты, присущие духовному облику советских людей и формирующие их духовную общность—социалистический патриотизм и интернационализм, общенациональная гордость, общие традиции, развитие двуязычия и т. д. Единая советская культура рождена самой жизнью, устремлена в будущее, восприимчива к достижениям мировой цивилизации и вместе с тем опирается на свое прошлое, прогрессивные и демократические традиции национальных культур народов СССР.